Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 1 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը** հաստատելու և Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում (արձանագրություն N 2) հաստատված «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ֆակուլտետների կանոնադրությունը» ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր **Կ. Լ. Աթոյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Պրոֆեսոր Ա.Վ.Մաթևոսյանը, դոցենտներ Թ.Մ.Մկրտչյանը, Ս.Վ.Խաչիկյանը, Պ.Ա.Քալանթարյանը, Լ.Ն.Մեհրաբյանը, Ա.Շ.Մարգարյանը, իրավաբանական բաժնի պետ Գ.Տոռոզյանը, տնտեսագիտության թեկնածու Ա.Ռ.Կարախանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Ղեկավարվելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով՝ **հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը**:

2. **Ուժը կորցրած ճանաչել** Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում (արձանագրություն N 2) հաստատված «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ֆակուլտետների կանոնադրությունը» (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն):

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

30.09.2015 թ.

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝+37410 521720
Ֆաքս՝+37410 528864, էլ-փոստ՝info@asue.am, www.asue.am